- *(λ-րդ և σ-րդ) փոխադարձ դիտարկող իներցիալ համակարգեր միջև ուղիղ և անդրադարձված արագությունների ձևափոխության Հայկական առնչությունները*

$$\begin{cases} \dfrac{U_{\sigma\lambda}}{c} = -\dfrac{\dfrac{U_{\lambda\sigma}}{c}}{1+s\dfrac{U_{\lambda\sigma}}{c}} \\[2ex] \dfrac{U_{\lambda\sigma}}{c} = -\dfrac{\dfrac{U_{\sigma\lambda}}{c}}{1+s\dfrac{U_{\sigma\lambda}}{c}} \end{cases}$$

Ը_11

- *(μ-րդ և σ-րդ) փոխադարձ դիտարկող իներցիալ համակարգեր միջև ուղիղ և անդրադարձված արագությունների ձևափոխության Հայկական առնչությունները*

$$\begin{cases} \dfrac{U_{\sigma\mu}}{c} = -\dfrac{\dfrac{U_{\mu\sigma}}{c}}{1+s\dfrac{U_{\mu\sigma}}{c}} \\[2ex] \dfrac{U_{\mu\sigma}}{c} = -\dfrac{\dfrac{U_{\sigma\mu}}{c}}{1+s\dfrac{U_{\sigma\mu}}{c}} \end{cases}$$

Ը_12

- *Փոխադարձ արագությունների ձևափոխության վերոգրյալ Հայկական առնչություններից մենք կստանանք դրանց միջև Հայկական համաչափ առնչությունները*

$$\begin{cases} \left(1+s\dfrac{U_{\lambda\sigma}}{c}\right)\left(1+s\dfrac{U_{\sigma\lambda}}{c}\right) = 1 \\[2ex] \left(1+s\dfrac{U_{\mu\sigma}}{c}\right)\left(1+s\dfrac{U_{\sigma\mu}}{c}\right) = 1 \end{cases}$$

Ը_13

➢ (Ե_09)-ով տրված համաչափ առնչության մեջ տեղադրելով բետա1 և բետա2 գործակիցների արտահայտությունները (Է_3) էջից, կստանանք հետևյալ առնչությունը

Ը_14
$$\left(1+s\frac{V_{\lambda\mu}}{c}+g\frac{V_{\lambda\mu}U_{\lambda\sigma}}{c^2}\right)\left(1+s\frac{V_{\mu\lambda}}{c}+g\frac{V_{\mu\lambda}U_{\mu\sigma}}{c^2}\right) = \frac{1}{\Gamma^2_{\lambda\mu}\Gamma^2_{\mu\lambda}}$$

➢ (Ե_10)-ով տրված առնչության մեջ տեղադրելով գամմա1 գործակիցների արտահայտությունները (Է_09)-ից, կստանանք հետևյալ առնչությունը

Ը_15
$$\left(\frac{U_{\lambda\sigma}}{c}-\frac{V_{\lambda\mu}}{c}\right)\left(\frac{U_{\mu\sigma}}{c}-\frac{V_{\mu\lambda}}{c}\right)\Gamma^2_{\lambda\mu}\Gamma^2_{\mu\lambda} = \frac{U_{\lambda\sigma}}{c}\frac{U_{\mu\sigma}}{c}$$

➢ (Ը_14)-ով տրված առնչության մեջ անցում կատարելով եզրային պայմանի երբ $\sigma = \lambda$ կստանանք հետևյալ առնչությունը

Ը_16
$$\left(1+s\frac{V_{\lambda\mu}}{c}\right)\left(1+s\frac{V_{\mu\lambda}}{c}+g\frac{V^2_{\mu\lambda}}{c^2}\right) = \frac{1}{\Gamma^2_{\lambda\mu}\Gamma^2_{\mu\lambda}}$$

➢ (Ը_14)-ով տրված առնչության մեջ անցում կատարելով եզրային պայմանի երբ $\sigma = \mu$ կստանանք հետևյալ առնչությունը

Ը_17
$$\left(1+s\frac{V_{\mu\lambda}}{c}\right)\left(1+s\frac{V_{\lambda\mu}}{c}+g\frac{V^2_{\lambda\mu}}{c^2}\right) = \frac{1}{\Gamma^2_{\lambda\mu}\Gamma^2_{\mu\lambda}}$$

➢ *Օգտվելով դիտարկող իներցիալ համակարգերի սեփական ժամանակների (Ե_18)-ով տրված արտահայտություններից և դրանց մեջ տեղադրելով (Է_10)-ով և (Է_12)-ով տրված բետա գործակիցների արտահայտությունները, կստանանք հետևյալ առնչությունները*

$$\begin{cases} d\tau_\lambda = \left(1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c} + g\dfrac{V_{\mu\lambda}^2}{c^2}\right)\Gamma_{\mu\lambda}^2 dT_{\mu\lambda} \\ d\tau_\mu = \left(1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c} + g\dfrac{V_{\lambda\mu}^2}{c^2}\right)\Gamma_{\lambda\mu}^2 dT_{\lambda\mu} \end{cases}$$

Ը_18

➢ *Համակարգերի սեփական ժամանակների (Ե_19)-ով տրված ձախ կողմի առնչությունների մեջ տեղադրելով բետա1 գործակիցների արտահայտությունները, կստանանք*

$$\begin{cases} dT_{\mu\lambda} = \left(1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)\Gamma_{\lambda\mu}^2 d\tau_\lambda \\ dT_{\lambda\mu} = \left(1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)\Gamma_{\mu\lambda}^2 d\tau_\mu \end{cases}$$

Ը_19

➢ *Համակարգերի սեփական ժամանակների (Ե_19)-ով տրված աջ կողմի առնչությունների մեջ տեղադրելով գամմա1 գործակիցների արտահայտությունները, կստանանք*

$$\begin{cases} \dfrac{V_{\lambda\mu}}{c} dT_{\lambda\mu} = -\dfrac{V_{\mu\lambda}}{c}\Gamma_{\mu\lambda}^2 d\tau_\mu \\ \dfrac{V_{\mu\lambda}}{c} dT_{\mu\lambda} = -\dfrac{V_{\lambda\mu}}{c}\Gamma_{\lambda\mu}^2 d\tau_\lambda \end{cases}$$

Ը_20

Գլուխ Թ

Առաջին Տեսակի Ընդհանուր Ձևափոխության Հավասարումների Ստացումը

Այս բաժնում մենք ստանում ենք առաջին տեսակի ձևափոխության հավասարումների տեսքը, որտեղ ալֆա1 գործակիցները դեռ անհայտ են: Մեր ստացման ապացույցը այնքան էլ խիստ չէ, բայց հետագայում համապատասխան հատորի մեջ առաջին տեսակի ձևափոխության հավասարումները մենք կարտածենք ամենախիստ ձևով և հետևաբար այս հատորում մենք այնքան էլ մտահոգված չենք այդ մասին: Այս բաժնում մենք ցույց ենք տալիս նաև որ առաջին տեսակի ձևափոխության հավասարումների որոշիչները հանդիսանում են բացասական մեծություններ:

- *Դիտարկող իներցիալ համակարգերի դեպքում (Դ_12)-ով և (Դ_13)-ով տրված առաջին տեսակի ուղիղ և հակադարձ ձևափոխության հավասարումները գրենք երկարության չափողականությամբ հետևյալ կերպ*

Ուղիղ ձևափոխության հավասարումները — Հակադարձ ձևափոխության հավասարումները

$$\begin{cases} cdT_{\mu\lambda} = \alpha^1_{\lambda\mu}(cdT_{\lambda\mu}) + (c\alpha^2_{\lambda\mu})dX_{\lambda\mu} \\ dX_{\mu\lambda} = \left(\frac{1}{c}\eta^1_{\lambda\mu}\right)(cdT_{\lambda\mu}) + \eta^2_{\lambda\mu}dX_{\lambda\mu} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} cdT_{\lambda\mu} = \alpha^1_{\mu\lambda}(cdT_{\mu\lambda}) + (c\alpha^2_{\mu\lambda})dX_{\mu\lambda} \\ dX_{\lambda\mu} = \left(\frac{1}{c}\eta^1_{\mu\lambda}\right)(cdT_{\mu\lambda}) + \eta^2_{\mu\lambda}dX_{\mu\lambda} \end{cases} \quad \text{Թ\_01}$$

- *Օգտվելով վերոգրյալ առաջին տեսակի ձևափոխության հավասարումներից կարող ենք հաշվել ուղիղ և հակադարձ հարաբերական արագությունների ձևափոխության առնչությունները ինչպես ցույց է տրված ստորև*

$$\begin{cases} \dfrac{V_{\mu\lambda}}{c} = \dfrac{dX_{\mu\lambda}}{cdT_{\mu\lambda}} = \dfrac{\left(\frac{1}{c}\eta^1_{\lambda\mu}\right)(cdT_{\lambda\mu}) + \eta^2_{\lambda\mu}dX_{\lambda\mu}}{\alpha^1_{\lambda\mu}(cdT_{\lambda\mu}) + (c\alpha^2_{\lambda\mu})dX_{\lambda\mu}} = \dfrac{\frac{1}{c}\eta^1_{\lambda\mu} + \eta^2_{\lambda\mu}\frac{V_{\lambda\mu}}{c}}{\alpha^1_{\lambda\mu} + (c\alpha^2_{\lambda\mu})\frac{V_{\lambda\mu}}{c}} \\ \dfrac{V_{\lambda\mu}}{c} = \dfrac{dX_{\lambda\mu}}{cdT_{\lambda\mu}} = \dfrac{\left(\frac{1}{c}\eta^1_{\mu\lambda}\right)(cdT_{\mu\lambda}) + \eta^2_{\mu\lambda}dX_{\mu\lambda}}{\alpha^1_{\mu\lambda}(cdT_{\mu\lambda}) + (c\alpha^2_{\mu\lambda})dX_{\mu\lambda}} = \dfrac{\frac{1}{c}\eta^1_{\mu\lambda} + \eta^2_{\mu\lambda}\frac{V_{\mu\lambda}}{c}}{\alpha^1_{\mu\lambda} + (c\alpha^2_{\mu\lambda})\frac{V_{\mu\lambda}}{c}} \end{cases} \quad \text{Թ\_02}$$

- *Հարաբերական արագությունների ձևափոխության վերոգրյալ նոր ստացված առնչությունները հավասարեցնենք հարաբերական արագությունների ձևափոխության (Ը_08)-ով տրված Հայկական առնչություններին*

$$\begin{cases} \dfrac{V_{\mu\lambda}}{c} = \dfrac{\frac{1}{c}\eta^1_{\lambda\mu} + \eta^2_{\lambda\mu}\frac{V_{\lambda\mu}}{c}}{\alpha^1_{\lambda\mu} + (c\alpha^2_{\lambda\mu})\frac{V_{\lambda\mu}}{c}} = -\dfrac{\frac{V_{\lambda\mu}}{c}}{1 + s\frac{V_{\lambda\mu}}{c}} \\ \dfrac{V_{\lambda\mu}}{c} = \dfrac{\frac{1}{c}\eta^1_{\mu\lambda} + \eta^2_{\mu\lambda}\frac{V_{\mu\lambda}}{c}}{\alpha^1_{\mu\lambda} + (c\alpha^2_{\mu\lambda})\frac{V_{\mu\lambda}}{c}} = -\dfrac{\frac{V_{\mu\lambda}}{c}}{1 + s\frac{V_{\mu\lambda}}{c}} \end{cases} \quad \text{Թ\_03}$$

- *(Թ_03)-ով տրված հավասարումները պարզեցնելով կստանանք հետևյալ հավասարումների համակարգը*

Թ_04

$$\begin{cases} \left(1+s\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)\left(\dfrac{1}{c}\eta^1_{\lambda\mu}+\eta^2_{\lambda\mu}\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)+\dfrac{V_{\lambda\mu}}{c}\left[\alpha^1_{\lambda\mu}+(c\alpha^2_{\lambda\mu})\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right] = 0 \\ \left(1+s\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)\left(\dfrac{1}{c}\eta^1_{\mu\lambda}+\eta^2_{\mu\lambda}\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)+\dfrac{V_{\mu\lambda}}{c}\left[\alpha^1_{\mu\lambda}+(c\alpha^2_{\mu\lambda})\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right] = 0 \end{cases}$$

- *Վերոգրյալ հավասարումների համակարգը կարող ենք գրել վերլուծված ըստ համապատասխան հարաբերական արագությունների աստիճանների*

Թ_05

$$\begin{cases} \dfrac{1}{c}\eta^1_{\lambda\mu}+\left(\alpha^1_{\lambda\mu}+\eta^2_{\lambda\mu}+\dfrac{1}{c}s\eta^1_{\lambda\mu}\right)\dfrac{V_{\lambda\mu}}{c}+\left(c\alpha^2_{\lambda\mu}+s\eta^2_{\lambda\mu}\right)\dfrac{V^2_{\lambda\mu}}{c^2} = 0 \\ \dfrac{1}{c}\eta^1_{\mu\lambda}+\left(\alpha_{\mu\lambda}+\eta^2_{\mu\lambda}+\dfrac{1}{c}s\eta^1_{\mu\lambda}\right)\dfrac{V_{\mu\lambda}}{c}+\left(c\alpha^2_{\mu\lambda}+s\eta^2_{\mu\lambda}\right)\dfrac{V^2_{\mu\lambda}}{c^2} = 0 \end{cases}$$

- *Վերոգրյալ հավասարումների համակարգի հարաբերական արագությունների բոլոր աստիճանների գործակիցները պետք է հավասար լինեն զրոյի*

Թ_06

$$\begin{cases} \eta^1_{\lambda\mu} = 0 \\ \alpha^1_{\lambda\mu}+\eta^2_{\lambda\mu}+\dfrac{1}{c}s\eta^1_{\lambda\mu} = 0 \\ c\alpha^2_{\lambda\mu}+s\eta^2_{\lambda\mu} = 0 \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} \eta^1_{\mu\lambda} = 0 \\ \alpha_{\mu\lambda}+\eta^2_{\mu\lambda}+\dfrac{1}{c}s\eta^1_{\mu\lambda} = 0 \\ c\alpha^2_{\mu\lambda}+s\eta^2_{\mu\lambda} = 0 \end{cases}$$

- *Վերոգրյալից օգտվելով առաջին տեսակի ձևափոխության հավասարումների գործակիցների համար մենք կստանանք հետևյալ արժեքները և արտահայտությունները*

Թ_07

$$\begin{cases} \eta^1_{\lambda\mu} = 0 \\ \eta^2_{\lambda\mu} = -\alpha^1_{\lambda\mu} \\ c\alpha^2_{\lambda\mu} = s\alpha^1_{\lambda\mu} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} \eta^1_{\mu\lambda} = 0 \\ \eta^2_{\mu\lambda} = -\alpha^1_{\mu\lambda} \\ c\alpha^2_{\mu\lambda} = s\alpha^1_{\mu\lambda} \end{cases}$$

- *(Թ_07)-ով տրված առաջին տեսակի ձևափոխության հավասարումների գործակիցների արժեքները և արտահայտությունները տեղադրելով (Թ_01)-ով տրված առաջին տեսակի ուղիղ և հակադարձ ձևափոխության հավասարումների մեջ, կստանանք*

Ուղիղ ձևափոխության հավասարումները — Հակադարձ ձևափոխության հավասարումները

$$\begin{cases} cdT_{\mu\lambda} = \alpha^1_{\lambda\mu}(cdT_{\lambda\mu} + sdX_{\lambda\mu}) \\ dX_{\mu\lambda} = -\alpha^1_{\lambda\mu}dX_{\lambda\mu} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} cdT_{\lambda\mu} = \alpha^1_{\mu\lambda}(cdT_{\mu\lambda} + sdX_{\mu\lambda}) \\ dX_{\lambda\mu} = -\alpha^1_{\mu\lambda}dX_{\mu\lambda} \end{cases} \qquad \text{Թ\_08}$$

- *Փոխադարձ դիտարկված առանցքաթվերի դիֆֆերենցիալների վերոգրյալ ձևափոխություններից կստանանք փոխադարձ դիտարկված ժամանակների դիֆֆերենցիալների միջև հետևյալ առնչությունները*

$$\begin{cases} dT_{\lambda\mu} = \alpha^1_{\mu\lambda}\left(1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)dT_{\mu\lambda} \\ dT_{\mu\lambda} = \alpha^1_{\lambda\mu}\left(1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)dT_{\lambda\mu} \end{cases} \qquad \text{Թ\_09}$$

- *Վերոգրյալ առնչություններից հետևում է որ ալֆա1 գործակիցները բավարարում են հակադարձության պայմանին*

$$\alpha^1_{\lambda\mu}\alpha^1_{\mu\lambda} = 1 \qquad \text{Թ\_10}$$

Պարզության համար մենք կարող ենք ընդունել որ ալֆա1 գործակիցները հավասար են մեկի: Բայց ամեն մի ընդունելություն առանց ապացուցման կարող է մեզ զրկել ամենաընդհանուր լուծումը գտնելու հաճույքից և հետևաբար մենք կհամարենք որ ալֆա1 գործակիցները առայժմ ունեն մեկից տարբեր արժեքներ, քանի դեռ չի ապացուցվել հակառակը: Թ_11

- *Մենք ընդունում ենք որ ամենաընդհանուր դեպքում ալֆա1 գործակիցները ունեն մեկից տարբեր **դրական արժեքներ**, իսկ ավելի Արի հետազոտողները թող քննարկեն նաև ալֆա1 գործակիցների բացասական արժեքների դեպքը*

Թ_12

$$\begin{cases} \alpha^{1}_{\lambda\mu} \neq 1 > 0 \\ \alpha^{1}_{\mu\lambda} \neq 1 > 0 \end{cases}$$

- *Առաջին տեսակի ձևափոխությունների դեպքում, (Թ_08)-ով տրված ձևափոխության ամենաընդհանուր հավասարումների որոշիչները կարող ենք արտահայտել ալֆա1 գործակիցներով հետևյալ կերպ*

Թ_13

$$\begin{cases} D^{1}_{\lambda\mu} = -\left(\alpha^{1}_{\lambda\mu}\right)^{2} < 0 \\ D^{1}_{\mu\lambda} = -\left(\alpha^{1}_{\mu\lambda}\right)^{2} < 0 \end{cases}$$

- *Հետևաբար ալֆա1 գործակիցների արժեքները կախված կլինեն համապատասխան առաջին տեսակի ձևափոխությունների որոշիչներից*

Թ_14

$$\begin{cases} \alpha^{1}_{\lambda\mu} = +\sqrt{-D^{1}_{\lambda\mu}} \\ \alpha^{1}_{\mu\lambda} = +\sqrt{-D^{1}_{\mu\lambda}} \end{cases}$$

- *Սահմանային դեպքում երբ դիտարկող համակարգերը համընկնում են իրար հետ, որը տեղի կունենա երբ մենք ընդունենք $\lambda = \mu$, ապա այդ պայմանի դեպքում ալֆա1 գործակիցների սեփական արժեքները հավասար կլինեն մեկի*

Թ_15

$$\alpha^{1}_{\lambda\lambda} = \alpha^{1}_{\mu\mu} = 1$$

Գլուխ Ժ

Առաջին և Երկրորդ Տեսակի Ձևափոխությունների Դեպքերում Հայկական Միջակայքերի Սահմանումը և Հետազոտումը

Ժամանակի և Տարածության Հայկական Տեսության մեջ մենք ընդունում ենք որ պատահարները տեղի են ունենում պատճառահետևանքային կապի շնորհիվ, որովհետև մենք քննարկում ենք մասնիկի շարժման կամ դաշտի տարածման դեպքերը և հետևաբար Հայկական միջակայքի դիֆֆերենցիալների քառակուսիները միշտ պետք է լինեն դրական մեծություններ, եթե չի ասվում, այլ բան:
Եվ ամենայն հավանականությամբ մենք ապրում ենք այնպիսի տիեզերքում որտեղ Հայկական միջակայքի դիֆֆերենցիալի քառակուսին դրական մեծություն է և հետևաբար s և g տիեզերական հաստատուն մեծությունները բավարարում են հետևյալ պայմանին:

$$g \neq \frac{1}{4}s^2$$

- *Դիտարկող իներցիալ համակարգերի փոխադարձ շարժման դիտարկման դեպքում Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունների սահմանումը, որոնք պատճառահետևանքային կապի շնորհիվ պետք է լինեն դրական մեծություններ*

Ժ_01

$$\begin{cases} (d\text{Ե}_{\lambda\mu})^2 = (cdT_{\lambda\mu})^2 + s(cdT_{\lambda\mu})dX_{\lambda\mu} + g(dX_{\lambda\mu})^2 > 0 \\ (d\text{Ե}_{\mu\lambda})^2 = (cdT_{\mu\lambda})^2 + s(cdT_{\mu\lambda})dX_{\mu\lambda} + g(dX_{\mu\lambda})^2 > 0 \end{cases}$$

- *Վերոգրյալ Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունները կարող ենք ներկայացնել նաև փոխադարձ դիտարկված հարաբերական արագություններով հետևյալ կերպ*

Ժ_02

$$\begin{cases} (d\text{Ե}_{\lambda\mu})^2 = \left(1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c} + g\dfrac{V_{\lambda\mu}^2}{c^2}\right)(cdT_{\lambda\mu})^2 > 0 \\ (d\text{Ե}_{\mu\lambda})^2 = \left(1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c} + g\dfrac{V_{\mu\lambda}^2}{c^2}\right)(cdT_{\mu\lambda})^2 > 0 \end{cases}$$

- *Հայկական միջակայքերի վերոգրյալ քառակուսային արտահայտություններից հետևում են ուղիղ և հակադարձ հարաբերական արագությունների որոշման տիրույթները*

Ժ_03

$$\begin{cases} 1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c} + g\dfrac{V_{\lambda\mu}^2}{c^2} > 0 \\ 1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c} + g\dfrac{V_{\mu\lambda}^2}{c^2} > 0 \end{cases}$$

- *Դիտարկող իներցիալ համակարգերի փոխադարձ շարժման դեպքում հաշվենք (Ժ_01)-ով տրված Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունները սահմանային դեպքում երբ դիտարկող համակարգերը համընկնում են իրար, որը տեղի կունենա $\mu = \lambda$ և $\lambda = \mu$ պայմանների դեպքում*

Ժ_04

$$\begin{cases} \mu = \lambda \rightarrow (d\text{Ե}_{\lambda\lambda})^2 = (cdT_{\lambda\lambda})^2 + s(cdT_{\lambda\lambda})dX_{\lambda\lambda} + g(dX_{\lambda\lambda})^2 = (cd\tau_{\lambda})^2 \\ \lambda = \mu \rightarrow (d\text{Ե}_{\mu\mu})^2 = (cdT_{\mu\mu})^2 + s(cdT_{\mu\mu})dX_{\mu\mu} + g(dX_{\mu\mu})^2 = (cd\tau_{\mu})^2 \end{cases}$$

- *Իներցիալ համակարգերի փոխադարձ շարժման դիտարկման դեպքում (Ժ_01)-ով տրված Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունների մեջ տեղադրելով (Թ_08)-ով տրված առանցքաթվերի դիֆֆերենցիալների համապատասխան ձևափոխության հավասարումները, կստանանք հետևյալ արտահայտությունները*

$$\begin{cases} (d\text{ե}_{\lambda\mu})^2 = (cdT_{\lambda\mu})^2 + s(cdT_{\lambda\mu})dX_{\lambda\mu} + g(dX_{\lambda\mu})^2 = \\ = (\alpha^1_{\mu\lambda})^2\left[(cdT_{\mu\lambda})^2 + s(cdT_{\mu\lambda})dX_{\mu\lambda} + g(dX_{\mu\lambda})^2\right] = (\alpha^1_{\mu\lambda})^2(d\text{ե}_{\mu\lambda})^2 \\ (d\text{ե}_{\mu\lambda})^2 = (cdT_{\mu\lambda})^2 + s(cdT_{\mu\lambda})dX_{\mu\lambda} + g(dX_{\mu\lambda})^2 = \\ = (\alpha^1_{\lambda\mu})^2\left[(cdT_{\lambda\mu})^2 + s(cdT_{\lambda\mu})dX_{\lambda\mu} + g(dX_{\lambda\mu})^2\right] = (\alpha^1_{\lambda\mu})^2(d\text{ե}_{\lambda\mu})^2 \end{cases} \quad \text{Ժ\_05}$$

- *Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունների վերոգրյալ երկու ձևափոխությունները գրենք միասին և այնուհետև օգտվելով Հայկական միջակայքերի հավասարության առաջին հիմնադրույթից, կստանանք*

$$\begin{cases} (d\text{ե}_{\zeta})^2 = (d\text{ե}_{\lambda\mu})^2 = (\alpha^1_{\mu\lambda})^2(d\text{ե}_{\mu\lambda})^2 \\ (d\text{ե}_{\zeta})^2 = (d\text{ե}_{\mu\lambda})^2 = (\alpha^1_{\lambda\mu})^2(d\text{ե}_{\lambda\mu})^2 \end{cases} \Rightarrow \begin{cases} (\alpha^1_{\lambda\mu})^2 = 1 \\ (\alpha^1_{\mu\lambda})^2 = 1 \end{cases} \quad \text{Ժ\_06}$$

- *Համաձայն (Թ_12)-ի և (Ժ_06)-ի, կստանանք որ ալֆա1 գործակիցների արժեքները հավասար են դրական մեկի և հետևաբար (Թ_13)-ից կստանանք որ առաջին տեսակի ձևափոխության հավասարումների որոշիչների արժեքները հավասար կլինեն բացասական մեկի և (Թ_09)-ից կստանանք փոխադարձ դիտարկված ժամանակների միջև Հայկական առնչությունները*

$$\begin{cases} \alpha^1_{\lambda\mu} = 1 \\ \alpha^1_{\mu\lambda} = 1 \end{cases} \Rightarrow \begin{cases} D^1_{\lambda\mu} = -1 \\ D^1_{\mu\lambda} = -1 \end{cases} \text{ և } \begin{cases} dT_{\lambda\mu} = \left(1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)dT_{\mu\lambda} \\ dT_{\mu\lambda} = \left(1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)dT_{\lambda\mu} \end{cases} \quad \text{Ժ\_07}$$

- *Իսկ ալֆա1 գործակիցների արժեքները վերոգրյալից տեղադրելով (Թ_08)-ի մեջ կստանանք փոխադարձ դիտարկված առանցքաթվերի դիֆֆերենցիալների ձևափոխության Հայկական հավասարումները*

Ուղիղ ձևափոխության հավասարումները — Հակադարձ ձևափոխության հավասարումները

$$\begin{cases} cdT_{\mu\lambda} = cdT_{\lambda\mu} + sdX_{\lambda\mu} \\ dX_{\mu\lambda} = -dX_{\lambda\mu} \end{cases} \text{ և } \begin{cases} cdT_{\lambda\mu} = cdT_{\mu\lambda} + sdX_{\mu\lambda} \\ dX_{\lambda\mu} = -dX_{\mu\lambda} \end{cases} \quad \text{Ժ\_08}$$

Երկրորդ Տեսակի Ձևափոխությունների Դեպքում Հայկական Միջակայքերի Քառակուսային Արտահայտությունների Սահմանումը

- *Մասնիկի շարժման դիտարկման դեպքում Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունների սահմանումը, որոնք պատճառահետևանքային կապի շնորհիվ պետք է լինեն դրական մեծություններ*

Ժ_09

$$\begin{cases} (d\text{Ե}_{\lambda\sigma})^2 = (cdT_{\lambda\sigma})^2 + s(cdT_{\lambda\sigma})dX_{\lambda\sigma} + g(dX_{\lambda\sigma})^2 > 0 \\ (d\text{Ե}_{\mu\sigma})^2 = (cdT_{\mu\sigma})^2 + s(cdT_{\mu\sigma})dX_{\mu\sigma} + g(dX_{\mu\sigma})^2 > 0 \end{cases}$$

- *Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունները կարող ենք ներկայացնել նաև մասնիկի դիտարկված արագություններով հետևյալ կերպ*

Ժ_10

$$\begin{cases} (d\text{Ե}_{\lambda\sigma})^2 = \left(1 + s\dfrac{U_{\lambda\sigma}}{c} + g\dfrac{U_{\lambda\sigma}^2}{c^2}\right)(cdT_{\lambda\sigma})^2 > 0 \\ (d\text{Ե}_{\mu\sigma})^2 = \left(1 + s\dfrac{U_{\mu\sigma}}{c} + g\dfrac{U_{\mu\sigma}^2}{c^2}\right)(cdT_{\mu\sigma})^2 > 0 \end{cases}$$

- *Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտություններից հետևում են մասնիկի արագությունների որոշման տիրույթները*

Ժ_11

$$\begin{cases} 1 + s\dfrac{U_{\lambda\sigma}}{c} + g\dfrac{U_{\lambda\sigma}^2}{c^2} > 0 \\ 1 + s\dfrac{U_{\mu\sigma}}{c} + g\dfrac{U_{\mu\sigma}^2}{c^2} > 0 \end{cases}$$

- *(Ժ_09)-ով տրված Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալների քառակուսային արտահայտությունները հաշվենք եզրային պայմանների դեպքում երբ* $\sigma = \lambda$ և $\sigma = \mu$

Ժ_12

$$\begin{cases} \sigma = \lambda \rightarrow (d\text{Ե}_{\lambda\lambda})^2 = (cdT_{\lambda\lambda})^2 + s(cdT_{\lambda\lambda})dX_{\lambda\lambda} + g(dX_{\lambda\lambda})^2 = (cd\tau_{\lambda})^2 \\ \sigma = \mu \rightarrow (d\text{Ե}_{\mu\mu})^2 = (cdT_{\mu\mu})^2 + s(cdT_{\mu\mu})dX_{\mu\mu} + g(dX_{\mu\mu})^2 = (cd\tau_{\mu})^2 \end{cases}$$

Երկրորդ Տեսակի Ձևափոխությունների Դեպքում Ձևափոխության Հավասարումների Որոշիչների Արժեքները

- *Երկրորդ տեսակի ձևափոխությունների դեպքում (Ժ_09)-ով տրված առաջին Հայկական միջակայքի արտահայտության մեջ տեղադրելով (Ը_02)-ով տրված մասնիկի առանցքաթվերի դիֆֆերենցիալների հակադարձ ձևափոխության հավասարումները, կստանանք հետևյալ արտահայտությունը*

$$
\begin{aligned}
(d\text{Ե}_{\lambda\sigma})^2 = {} & \left[(\mathcal{B}^1_{\mu\lambda})^2 + s\mathcal{B}^1_{\mu\lambda}\left(\tfrac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right) + g\left(\tfrac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right)^2\right](cdT_{\mu\sigma})^2 + \\
& +2\left[\mathcal{B}^1_{\mu\lambda}\left(c\mathcal{B}^2_{\mu\lambda} + \tfrac{1}{2}s\Gamma^2_{\mu\lambda}\right) + \left(\tfrac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right)\left(\tfrac{1}{2}sc\mathcal{B}^2_{\mu\lambda} + g\Gamma^2_{\mu\lambda}\right)\right](cdT_{\mu\sigma})(dX_{\mu\sigma}) + \\
& +\left[(c\mathcal{B}^2_{\mu\lambda})^2 + s(c\mathcal{B}^2_{\mu\lambda})\Gamma^2_{\mu\lambda} + g(\Gamma^2_{\mu\lambda})^2\right](dX_{\mu\sigma})^2
\end{aligned}
\qquad \text{Ժ\_13}
$$

- *Երկրորդ տեսակի ձևափոխությունների դեպքում (Ժ_09)-ով տրված երկրորդ Հայկական միջակայքի արտահայտության մեջ տեղադրելով (Ը_01)-ով տրված մասնիկի առանցքաթվերի դիֆֆերենցիալների ուղիղ ձևափոխության հավասարումները, կստանանք հետևյալ արտահայտությունը*

$$
\begin{aligned}
(d\text{Ե}_{\mu\sigma})^2 = {} & \left[(\mathcal{B}^1_{\lambda\mu})^2 + s\mathcal{B}^1_{\lambda\mu}\left(\tfrac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right) + g\left(\tfrac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right)^2\right](cdT_{\lambda\sigma})^2 + \\
& +2\left[\mathcal{B}^1_{\lambda\mu}\left(c\mathcal{B}^2_{\lambda\mu} + \tfrac{1}{2}s\Gamma^2_{\lambda\mu}\right) + \left(\tfrac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right)\left(\tfrac{1}{2}sc\mathcal{B}^2_{\lambda\mu} + g\Gamma^2_{\lambda\mu}\right)\right](cdT_{\lambda\sigma})(dX_{\lambda\sigma}) + \\
& +\left[(c\mathcal{B}^2_{\lambda\mu})^2 + s(c\mathcal{B}^2_{\lambda\mu})\Gamma^2_{\lambda\mu} + g(\Gamma^2_{\lambda\mu})^2\right](dX_{\lambda\sigma})^2
\end{aligned}
\qquad \text{Ժ\_14}
$$

- *Օգտվելով (Է_17)-ով, (Է_19)-ով և (Է_21)-ով տրված որոշիչների առնչություններից, Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալի քառակուսիների վերոգրյալ երկու ձևափոխությունների համար կստանանք հետևյալ առնչությունները*

$$
\begin{cases}
(d\text{Ե}_{\lambda\sigma})^2 = D^2_{\mu\lambda}\left[(cdT_{\mu\sigma})^2 + s(cdT_{\mu\sigma})dX_{\mu\sigma} + g(dX_{\mu\sigma})^2\right] = D^2_{\mu\lambda}(d\text{Ե}_{\mu\sigma})^2 \\
(d\text{Ե}_{\mu\sigma})^2 = D^2_{\lambda\mu}\left[(cdT_{\lambda\sigma})^2 + s(cdT_{\lambda\sigma})dX_{\lambda\sigma} + g(dX_{\lambda\sigma})^2\right] = D^2_{\lambda\mu}(d\text{Ե}_{\lambda\sigma})^2
\end{cases}
\qquad \text{Ժ\_15}
$$

- *Օգտվելով Հայկական միջակայքերի հավասարության առաջին հիմնադրույթից և այն կիրառելով (Ժ_15)-ի մեջ, կստանանք որ երկրորդ տեսակի ձևափոխության հավասարումների որոշիչների արժեքները հավասար են դրական մեկի*

$$
\underline{(d\text{Ե}_{\zeta})^2 = (d\text{Ե}_{\lambda\sigma})^2 = (d\text{Ե}_{\mu\sigma})^2} \quad \rightarrow \quad \underline{D^2_{\lambda\mu} = D^2_{\mu\lambda} = 1}
\qquad \text{Ժ\_16}
$$

➤ *(Զ_10)-ով և (Զ_11)-ով տրված առնչությունները կարող ենք գրել միասին հետևյալ կերպ*

Ժ_17

$$\begin{cases} B^2_{\lambda\mu} = -B^2_{\mu\lambda} \\ \Gamma^1_{\lambda\mu} = -\Gamma^1_{\mu\lambda} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} B^1_{\lambda\mu} = +\Gamma^2_{\mu\lambda} \\ \Gamma^2_{\lambda\mu} = +B^1_{\mu\lambda} \end{cases}$$

➤ *(Է_18)-ով տրված առնչությունները կլինեն*

Ժ_18

$$\begin{cases} (\Gamma^2_{\lambda\mu})^2 - s\Gamma^2_{\lambda\mu}\left(\frac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right) + g\left(\frac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right)^2 = 1 \\ (\Gamma^2_{\mu\lambda})^2 - s\Gamma^2_{\mu\lambda}\left(\frac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right) + g\left(\frac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right)^2 = 1 \end{cases}$$

➤ *(Է_20)-ով տրված առնչությունները կլինեն*

Ժ_19

$$\begin{cases} (cB^2_{\lambda\mu})^2 - s(cB^2_{\lambda\mu})B^1_{\lambda\mu} + g(B^1_{\lambda\mu})^2 = g \\ (cB^2_{\mu\lambda})^2 - s(cB^2_{\mu\lambda})B^1_{\mu\lambda} + g(B^1_{\mu\lambda})^2 = g \end{cases}$$

➤ *(Է_21)-ով տրված առնչությունները կլինեն*

Ժ_20

$$\begin{cases} B^1_{\lambda\mu}\left(cB^2_{\lambda\mu} + \frac{1}{2}s\Gamma^2_{\lambda\mu}\right) + \left(\frac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right)\left(\frac{1}{2}scB^2_{\lambda\mu} + g\Gamma^2_{\lambda\mu}\right) = \frac{1}{2}s \\ B^1_{\mu\lambda}\left(cB^2_{\mu\lambda} + \frac{1}{2}s\Gamma^2_{\mu\lambda}\right) + \left(\frac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right)\left(\frac{1}{2}scB^2_{\mu\lambda} + g\Gamma^2_{\mu\lambda}\right) = \frac{1}{2}s \end{cases}$$

- *Ժամանակի և Տարածության Հայկական Տեսության առաջին հիմնադրույթը, համաձայն (Ժ_06)-ի և (Ժ_16)-ի, կարող ենք ներկայացնել պատկերավոր տեսքով հետևյալ կերպ*

$$\boxed{\left\{\begin{array}{ccccc} (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\lambda\mu})^2 & = & (d\text{Ե}_{\mu\lambda})^2 \\ & & \Vert & & \Vert \\ (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\lambda\sigma})^2 & = & (d\text{Ե}_{\mu\sigma})^2 \end{array}\right.} \qquad \text{Ժ\_21}$$

- *Ժամանակի և Տարածության Հայկական Տեսության առաջին հիմնադրույթի վերոգրյալ պատկերավոր տեսքը կարող ենք ներկայացնել նաև պատկերավոր հետևյալ կերպ*

$$\boxed{\left\{\begin{array}{ccccc} (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\lambda\sigma})^2 & = & (d\text{Ե}_{\lambda\mu})^2 \\ & & \Vert & & \Vert \\ (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\mu\sigma})^2 & = & (d\text{Ե}_{\mu\lambda})^2 \end{array}\right.} \qquad \text{Ժ\_22}$$

- *Երկրորդ տեսակի ձևափոխությունների դեպքում օգտվելով (Ժ_12)-ով տրված Հայկական միջակայքերի դիֆֆերենցիալի քառակուսիների սեփական արժեքներից, կստանանք հետևյալ կարևոր հետևությունը*

$$\boxed{\left\{\begin{array}{ccccc} (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\lambda\sigma})^2 & = & (cd\tau_{\lambda})^2 \\ (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\mu\sigma})^2 & = & (cd\tau_{\mu})^2 \end{array}\right.} \qquad \text{Ժ\_23}$$

- *Հետևաբար (Ժ_22)-ով տրված Հայկական միջակայքի դիֆֆերենցիալի քառակուսային արտահայտությունը, համաձայն (Ժ_23)-ի, կարող ենք ներկայացնել պատկերավոր ավելի լրիվ տեսքով հետևյալ կերպ, որը ճիշտ է σ ցուցիչի ցանկացած արժեքի համար*

$$\boxed{\left\{\begin{array}{ccccccc} (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\lambda\sigma})^2 & = & (d\text{Ե}_{\lambda\mu})^2 & = & (cd\tau_{\lambda})^2 \\ & & \Vert & & \Vert & & \Vert \\ (d\text{Ե}_{\text{չ}})^2 & = & (d\text{Ե}_{\mu\sigma})^2 & = & (d\text{Ե}_{\mu\lambda})^2 & = & (cd\tau_{\mu})^2 \end{array}\right.} \qquad \text{Ժ\_24}$$

Հայկական Կայուն Միջակայքի Դիֆֆերենցիալի Քառակուսիները Արտահայտված Համապատասխան Արագություններով

- *Հայկական կայուն միջակայքի դիֆֆերենցիալի քառակուսիների (Ճ_24)-ով տրված պատկերավոր տեսքի միայն զուգահեռ հավասարությունները, համաձայն (Ճ_02,10)-ի , կարող ենք գրել միասին և համապատասխան արագություններով հետևյալ կերպ*

$$\begin{cases} \left(1+s\dfrac{U_{\lambda\sigma}}{c}+g\dfrac{U_{\lambda\sigma}^2}{c^2}\right)(cdT_{\lambda\sigma})^2 = \left(1+s\dfrac{V_{\lambda\mu}}{c}+g\dfrac{V_{\lambda\mu}^2}{c^2}\right)(cdT_{\lambda\mu})^2 = (cd\tau_{\lambda})^2 \\ \left(1+s\dfrac{U_{\mu\sigma}}{c}+g\dfrac{U_{\mu\sigma}^2}{c^2}\right)(cdT_{\mu\sigma})^2 = \left(1+s\dfrac{V_{\mu\lambda}}{c}+g\dfrac{V_{\mu\lambda}^2}{c^2}\right)(cdT_{\mu\lambda})^2 = (cd\tau_{\mu})^2 \end{cases}$$

Ճ_25

- *Հայկական կայուն միջակայքի դիֆֆերենցիալի քառակուսիների (Ճ_24)-ով տրված պատկերավոր տեսքի առաջին և երկրորդ ուղղահայաց հավասարությունները կարող ենք գրել միասին և համապատասխան արագություններով հետևյալ կերպ*

$$\begin{cases} \left(1+s\dfrac{V_{\lambda\mu}}{c}+g\dfrac{V_{\lambda\mu}^2}{c^2}\right)(cdT_{\lambda\mu})^2 = \left(1+s\dfrac{V_{\mu\lambda}}{c}+g\dfrac{V_{\mu\lambda}^2}{c^2}\right)(cdT_{\mu\lambda})^2 \\ \left(1+s\dfrac{U_{\lambda\sigma}}{c}+g\dfrac{U_{\lambda\sigma}^2}{c^2}\right)(cdT_{\lambda\sigma})^2 = \left(1+s\dfrac{U_{\mu\sigma}}{c}+g\dfrac{U_{\mu\sigma}^2}{c^2}\right)(cdT_{\mu\sigma})^2 \end{cases}$$

Ճ_26

- *Հայկական կայուն միջակայքի դիֆֆերենցիալի քառակուսիների (Ճ_24)-ով տրված պատկերավոր տեսքի միայն երրորդ ուղղահայաց հավասարությունից հետևում է որ դիտարկող իներցիալ համակարգերի սեփական ժամանակները իրար հավասար են*

$$d\tau_{\lambda} = d\tau_{\mu}$$

Ճ_27

Ճ_28

21-րդ դարը լինելու է Հայկական գիտության հաղթարշավի դարաշրջան
(14 Հոկտեմբերի 2016թ., Երևան)

Գլուխ ԺԱ

Մասնիկի Ուղիղ Շարժման Ձևափոխության Հայկական Հավասարումներից Ստանալ Մասնիկի Անդրադարձված Շարժման Ձևափոխության Հայկական Հավասարումները

Այս բաժնում մենք ապացուցում ենք որ մասնիկի անդրադարձված առանցքաթվերի ձևափոխության Հայկական հավասարումները ունեն մասնիկի ուղիղ առանցքաթվերի ձևափոխության Հայկական հավասարումների տեսքը: Հետևաբար մասնիկի ուղիղ և անդրադարձված առանցքաթվերի ձևափոխության հավասարումների տեսքը ունի տիեզերական բնույթ:

λ-րդ և μ-րդ Համակարգերից σ Մասնիկի Դիտարկման Դեպքում Մասնիկի Առանցքաթվերի Դիֆֆերենցիալների Բոլոր Հնարավոր Ձևափոխության Հավասարումները

➤ *(Ժ_08)-ին համանման, (λ,σ) համակարգերի միջև առաջին տեսակի ձևափոխությունների դեպքում փոխադարձ դիտարկված առանցքաթվերի ձևափոխության հավասարումները*

ԺԱ_01

$$\begin{cases} cdT_{\lambda\sigma} = cdT_{\sigma\lambda} + sdX_{\sigma\lambda} \\ dX_{\lambda\sigma} = -dX_{\sigma\lambda} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} cdT_{\sigma\lambda} = cdT_{\lambda\sigma} + sdX_{\lambda\sigma} \\ dX_{\sigma\lambda} = -dX_{\lambda\sigma} \end{cases}$$

➤ *(Ժ_08)-ին համանման, (μ,σ) համակարգերի միջև առաջին տեսակի ձևափոխությունների դեպքում փոխադարձ դիտարկված առանցքաթվերի ձևափոխության հավասարումները*

ԺԱ_02

$$\begin{cases} cdT_{\mu\sigma} = cdT_{\sigma\mu} + sdX_{\sigma\mu} \\ dX_{\mu\sigma} = -dX_{\sigma\mu} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} cdT_{\sigma\mu} = cdT_{\mu\sigma} + sdX_{\mu\sigma} \\ dX_{\sigma\mu} = -dX_{\mu\sigma} \end{cases}$$

➤ *(Ժ_07)-ին համանման, (λ,σ) և (μ,σ) զույգ համակարգերի փոխադարձ դիտարկված ժամանակների դիֆֆերենցիալների միջև Հայկական առնչությունները կլինեն*

ԺԱ_03

$$\begin{cases} dT_{\sigma\lambda} = \left(1 + s\dfrac{U_{\lambda\sigma}}{c}\right)dT_{\lambda\sigma} \\ dT_{\lambda\sigma} = \left(1 + s\dfrac{U_{\sigma\lambda}}{c}\right)dT_{\sigma\lambda} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} dT_{\sigma\mu} = \left(1 + s\dfrac{U_{\mu\sigma}}{c}\right)dT_{\mu\sigma} \\ dT_{\mu\sigma} = \left(1 + s\dfrac{U_{\sigma\mu}}{c}\right)dT_{\sigma\mu} \end{cases}$$

➤ *λ-րդ և μ-րդ համակարգերից σ մասնիկի ուղիղ շարժման դիտարկման դեպքում մասնիկի առանցքաթվերի դիֆֆերենցիալների ձևափոխության հավասարումները*

ԺԱ_04

Ուղիղ ձևափոխության հավասարումները — Հակադարձ ձևափոխության հավասարումները

$$\begin{cases} cdT_{\mu\sigma} = \mathcal{B}^1_{\lambda\mu}(cdT_{\lambda\sigma}) + (c\mathcal{B}^2_{\lambda\mu})dX_{\lambda\sigma} \\ dX_{\mu\sigma} = \left(\frac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right)(cdT_{\lambda\sigma}) + \Gamma^2_{\lambda\mu}dX_{\lambda\sigma} \end{cases} \quad \text{և} \quad \begin{cases} cdT_{\lambda\sigma} = \mathcal{B}^1_{\mu\lambda}(cdT_{\mu\sigma}) + (c\mathcal{B}^2_{\mu\lambda})dX_{\mu\sigma} \\ dX_{\lambda\sigma} = \left(\frac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right)(cdT_{\mu\sigma}) + \Gamma^2_{\mu\lambda}dX_{\mu\sigma} \end{cases}$$

Երկրորդ Տեսակի Ձևափոխության Դեպքում Մասնիկի Առանցքաթվերի Դիֆֆերենցիալների Ձևափոխության Հավասարումների Ներկայացումը Մասնիկի Անդրադարձված Առանցքաթվերով

- *λ-րդ և μ-րդ դիտարկող իներցիալ համակարգերի նկատմամբ σ մասնիկի (ԺԱ_04)-ով տրված ուղիղ ձևափոխության հավասարումների մեջ տեղադրելով (ԺԱ_01,02)-ով տրված ուղիղ առանցքաթվերը, կստանանք անդրադարձված առանցքաթվերի ուղիղ ձևափոխության հավասարումները ոչ բացահայտ տեսքով*

$$\begin{cases} cdT_{\sigma\mu} + s dX_{\sigma\mu} = \mathcal{B}^{1}_{\lambda\mu}(cdT_{\sigma\lambda} + s dX_{\sigma\lambda}) - (c\mathcal{B}^{2}_{\lambda\mu})dX_{\sigma\lambda} \\ -dX_{\sigma\mu} = \left(\frac{1}{c}\Gamma^{1}_{\lambda\mu}\right)(cdT_{\sigma\lambda} + s dX_{\sigma\lambda}) - \Gamma^{2}_{\lambda\mu} dX_{\sigma\lambda} \end{cases}$$

ԺԱ_05

- *λ-րդ և μ-րդ դիտարկող իներցիալ համակարգերի նկատմամբ σ մասնիկի (ԺԱ_04)-ով տրված հակադարձ ձևափոխության հավասարումների մեջ տեղադրելով (ԺԱ_01,02)-ով տրված ուղիղ առանցքաթվերը, կստանանք անդրադարձված առանցքաթվերի հակադարձ ձևափոխության հավասարումները ոչ բացահայտ տեսքով*

$$\begin{cases} cdT_{\sigma\lambda} + s dX_{\sigma\lambda} = \mathcal{B}^{1}_{\mu\lambda}(cdT_{\sigma\mu} + s dX_{\sigma\mu}) - (c\mathcal{B}^{2}_{\mu\lambda})dX_{\sigma\mu} \\ -dX_{\sigma\lambda} = \left(\frac{1}{c}\Gamma^{1}_{\mu\lambda}\right)(cdT_{\sigma\mu} + s dX_{\sigma\mu}) - \Gamma^{2}_{\mu\lambda} dX_{\sigma\mu} \end{cases}$$

ԺԱ_06

- *Մասնիկի անդրադարձված առանցքաթվերի (ԺԱ_05)-ով տրված ուղիղ ձևափոխության հավասարումների մեջ, համաձայն (Ժ_17)-ով տրված առնչությունների, ձևափոխության ուղիղ գործակիցները փոխարինելով հակադարձ գործակիցներով, կստանանք*

$$\begin{cases} cdT_{\sigma\mu} + s dX_{\sigma\mu} = \Gamma^{2}_{\mu\lambda}(cdT_{\sigma\lambda}) + (s\Gamma^{2}_{\mu\lambda} + c\mathcal{B}^{2}_{\mu\lambda})dX_{\sigma\lambda} \\ dX_{\sigma\mu} = \left(\frac{1}{c}\Gamma^{1}_{\mu\lambda}\right)(cdT_{\sigma\lambda}) + \left(\mathcal{B}^{1}_{\mu\lambda} + s\frac{1}{c}\Gamma^{1}_{\mu\lambda}\right)dX_{\sigma\lambda} \end{cases}$$

ԺԱ_07

- *Մասնիկի անդրադարձված առանցքաթվերի (ԺԱ_06)-ով տրված հակադարձ ձևափոխության հավասարումների մեջ, համաձայն (Ժ_17)-ով տրված առնչությունների, ձևափոխության հակադարձ գործակիցները փոխարինելով ուղիղ գործակիցներով, կստանանք*

$$\begin{cases} cdT_{\sigma\lambda} + s dX_{\sigma\lambda} = \Gamma^{2}_{\lambda\mu}(cdT_{\sigma\mu}) + (s\Gamma^{2}_{\lambda\mu} + c\mathcal{B}^{2}_{\lambda\mu})dX_{\sigma\mu} \\ dX_{\sigma\lambda} = \left(\frac{1}{c}\Gamma^{1}_{\lambda\mu}\right)(cdT_{\sigma\mu}) + \left(\mathcal{B}^{1}_{\lambda\mu} + s\frac{1}{c}\Gamma^{1}_{\lambda\mu}\right)dX_{\sigma\mu} \end{cases}$$

ԺԱ_08

➤ *Այնուհետև (ԺԱ_07)-ի երկրորդ հավասարման մեջ տեղադրելով (Է_08)-ով տրված հակադարձ բետա1 գործակցի արտահայտությունը, կստանանք*

ԺԱ_09

$$\begin{cases} cdT_{\sigma\mu} + sdX_{\sigma\mu} &= \Gamma^2_{\mu\lambda}(cdT_{\sigma\lambda}) + (c\mathcal{B}^2_{\mu\lambda} + s\Gamma^2_{\mu\lambda})dX_{\sigma\lambda} \\ dX_{\sigma\mu} &= \left(\frac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right)(cdT_{\sigma\lambda}) + \Gamma^2_{\mu\lambda}dX_{\sigma\lambda} \end{cases}$$

➤ *Նման ձևով (ԺԱ_08)-ի երկրորդ հավասարման մեջ տեղադրելով (Է_08)-ով տրված ուղիղ բետա1 գործակցի արտահայտությունը, կստանանք*

ԺԱ_10

$$\begin{cases} cdT_{\sigma\lambda} + sdX_{\sigma\lambda} &= \Gamma^2_{\lambda\mu}(cdT_{\sigma\mu}) + (c\mathcal{B}^2_{\lambda\mu} + s\Gamma^2_{\lambda\mu})dX_{\sigma\mu} \\ dX_{\sigma\lambda} &= \left(\frac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right)(cdT_{\sigma\mu}) + \Gamma^2_{\lambda\mu}dX_{\sigma\mu} \end{cases}$$

➤ *(ԺԱ_09)-ով տրված հավասարումների համակարգի համատեղ լուծումից կարող ենք որոշել անդրադարձված առանցքաթվերի ուղիղ ձևափոխության հավասարումները*

ԺԱ_11

$$\begin{cases} cdT_{\sigma\mu} &= \mathcal{B}^1_{\mu\lambda}(cdT_{\sigma\lambda}) + (c\mathcal{B}^2_{\mu\lambda})dX_{\sigma\lambda} \\ dX_{\sigma\mu} &= \left(\frac{1}{c}\Gamma^1_{\mu\lambda}\right)(cdT_{\sigma\lambda}) + \Gamma^2_{\mu\lambda}dX_{\sigma\lambda} \end{cases}$$

➤ *(ԺԱ_10)-ով տրված հավասարումների համակարգի համատեղ լուծումից կարող ենք որոշել անդրադարձված առանցքաթվերի հակադարձ ձևափոխության հավասարումները*

ԺԱ_12

$$\begin{cases} cdT_{\sigma\lambda} &= \mathcal{B}^1_{\lambda\mu}(cdT_{\sigma\mu}) + (c\mathcal{B}^2_{\lambda\mu})dX_{\sigma\mu} \\ dX_{\sigma\lambda} &= \left(\frac{1}{c}\Gamma^1_{\lambda\mu}\right)(cdT_{\sigma\mu}) + \Gamma^2_{\lambda\mu}dX_{\sigma\mu} \end{cases}$$

- *Մասնիկի ուղիղ շարժման դիտարկման դեպքում, համաձայն (Ը_03)-ի, մասնիկի առանցքաթվերի դիֆֆերենցիալների Հայկական ընդհանուր ուղիղ ձևափոխության հավասարումները*

$$\begin{cases} cdT_{\mu\sigma} & = \left[\left(1+s\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)(cdT_{\lambda\sigma})+\left(g\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)dX_{\lambda\sigma}\right]\Gamma^2_{\lambda\mu} \\ dX_{\mu\sigma} & = \left[dX_{\lambda\sigma}-\dfrac{V_{\lambda\mu}}{c}(cdT_{\lambda\sigma})\right]\Gamma^2_{\lambda\mu} \end{cases} \quad \text{ԺԱ\_13}$$

- *Մասնիկի ուղիղ շարժման դիտարկման դեպքում, համաձայն (Ը_04)-ի, մասնիկի առանցքաթվերի դիֆֆերենցիալների Հայկական ընդհանուր հակադարձ ձևափոխության հավասարումները*

$$\begin{cases} cdT_{\lambda\sigma} & = \left[\left(1+s\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)(cdT_{\mu\sigma})+\left(g\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)dX_{\mu\sigma}\right]\Gamma^2_{\mu\lambda} \\ dX_{\lambda\sigma} & = \left[dX_{\mu\sigma}-\dfrac{V_{\mu\lambda}}{c}(cdT_{\mu\sigma})\right]\Gamma^2_{\mu\lambda} \end{cases} \quad \text{ԺԱ\_14}$$

- *(ԺԱ_11)-ի մեջ տեղադրելով ձևափոխության գործակիցների արտահայտությունները (Է_09,10,12)-ից, կստանանք մասնիկի անդրադարձված առանցքաթվերի դիֆֆերենցիալների Հայկական ընդհանուր ուղիղ ձևափոխության հավասարումները*

$$\begin{cases} cdT_{\sigma\mu} & = \left[\left(1+s\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)(cdT_{\sigma\lambda})+\left(g\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)dX_{\sigma\lambda}\right]\Gamma^2_{\mu\lambda} \\ dX_{\sigma\mu} & = \left[dX_{\sigma\lambda}-\dfrac{V_{\mu\lambda}}{c}(cdT_{\sigma\lambda})\right]\Gamma^2_{\mu\lambda} \end{cases} \quad \text{ԺԱ\_15}$$

- *(ԺԱ_12)-ի մեջ տեղադրելով ձևափոխության գործակիցների արտահայտությունները (Է_09,10,12)-ից, կստանանք մասնիկի անդրադարձված առանցքաթվերի դիֆֆերենցիալների Հայկական ընդհանուր հակադարձ ձևափոխության հավասարումները*

$$\begin{cases} cdT_{\sigma\lambda} & = \left[\left(1+s\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)(cdT_{\sigma\mu})+\left(g\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)dX_{\sigma\mu}\right]\Gamma^2_{\lambda\mu} \\ dX_{\sigma\lambda} & = \left[dX_{\sigma\mu}-\dfrac{V_{\lambda\mu}}{c}(cdT_{\sigma\mu})\right]\Gamma^2_{\lambda\mu} \end{cases} \quad \text{ԺԱ\_16}$$

- *Օգտվելով (ԺԱ_15)-ով և (ԺԱ_16)-ով տրված մասնիկի անդրադարձված առանցքաթվերի դիֆֆերենցիալների Հայկական ձևափոխության հավասարումներից, կստանանք մասնիկի անդրադարձված դիտարկված ժամանակների հարաբերությունների արտահայտությունները*

ԺԱ_17

$$\begin{cases} \dfrac{dT_{\sigma\mu}}{dT_{\sigma\lambda}} = \left(1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c} + g\dfrac{V_{\mu\lambda}U_{\sigma\lambda}}{c^2}\right)\Gamma^2_{\mu\lambda} \\ \dfrac{dT_{\sigma\lambda}}{dT_{\sigma\mu}} = \left(1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c} + g\dfrac{V_{\lambda\mu}U_{\sigma\mu}}{c^2}\right)\Gamma^2_{\lambda\mu} \end{cases}$$

- *Նույնպես օգտվելով (ԺԱ_15)-ից և (ԺԱ_16)-ից կարող ենք որոշել նաև մասնիկի անդրադարձված արագությունների ձևափոխության Հայկական առնչությունները*

ԺԱ_18

$$\begin{cases} \dfrac{U_{\sigma\mu}}{c} = \dfrac{\dfrac{U_{\sigma\lambda}}{c} - \dfrac{V_{\mu\lambda}}{c}}{1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c} + g\dfrac{V_{\mu\lambda}U_{\sigma\lambda}}{c^2}} \\ \dfrac{U_{\sigma\lambda}}{c} = \dfrac{\dfrac{U_{\sigma\mu}}{c} - \dfrac{V_{\lambda\mu}}{c}}{1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c} + g\dfrac{V_{\lambda\mu}U_{\sigma\mu}}{c^2}} \end{cases}$$

- *Իսկ օգտվելով անդրադարձված արագությունների ձևափոխության վերոգրյալ Հայկական առնչություններից կարող ենք որոշել հարաբերական արագությունները արտահայտված մասնիկի անդրադարձված արագություններով*

ԺԱ_19

$$\begin{cases} \dfrac{V_{\lambda\mu}}{c} = \dfrac{\dfrac{U_{\sigma\mu}}{c} - \dfrac{U_{\sigma\lambda}}{c}}{1 + s\dfrac{U_{\sigma\lambda}}{c} + g\dfrac{U_{\sigma\lambda}U_{\sigma\mu}}{c^2}} \\ \dfrac{V_{\mu\lambda}}{c} = \dfrac{\dfrac{U_{\sigma\lambda}}{c} - \dfrac{U_{\sigma\mu}}{c}}{1 + s\dfrac{U_{\sigma\mu}}{c} + g\dfrac{U_{\sigma\lambda}U_{\sigma\mu}}{c^2}} \end{cases}$$

Մի պահ անտեսենք այն փաստը որ այս հատորում դիտարկող համակարգերը իներցիալ են և որպես զուտ մաթեմատիկական խնդիր լուծենք այն ընդունելով որ հարաբերական արագությունները նույնպես փոփոխական են: ԺԱ_20

➢ *Օգտվենք (Բ_3)-ով տրված տարբեր արագացումների հետևյալ նշագրումներից*

$$\begin{cases} A_{\lambda\mu} = \dfrac{dV_{\lambda\mu}}{dT_{\lambda\mu}} \\ A_{\mu\lambda} = \dfrac{dV_{\mu\lambda}}{dT_{\mu\lambda}} \end{cases} \text{ և } \begin{cases} B_{\lambda\sigma} = \dfrac{dU_{\lambda\sigma}}{dT_{\lambda\sigma}} \\ B_{\sigma\lambda} = \dfrac{dU_{\sigma\lambda}}{dT_{\sigma\lambda}} \end{cases} \text{ և } \begin{cases} B_{\mu\sigma} = \dfrac{dU_{\mu\sigma}}{dT_{\mu\sigma}} \\ B_{\sigma\mu} = \dfrac{dU_{\sigma\mu}}{dT_{\sigma\mu}} \end{cases} \quad \text{ԺԱ\_21}$$

➢ *Ածանցելով հարաբերական արագությունների ձևափոխության (Ը_08)-ով տրված Հայկական առնչությունները ըստ համապատասխան փոխադարձ դիտարկված ժամանակների, կստանանք հարաբերական արագացումների ձևափոխության Հայկական առնչությունները*

$$\begin{cases} A_{\lambda\mu} = -\dfrac{A_{\mu\lambda}}{\left(1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c}\right)^3} \\ A_{\mu\lambda} = -\dfrac{A_{\lambda\mu}}{\left(1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c}\right)^3} \end{cases} \quad \text{ԺԱ\_22}$$

➢ *Ածանցելով փոխադարձ արագությունների (Ը_11,12)-ով տրված Հայկական առնչությունները ըստ համապատասխան փոխադարձ դիտարկված ժամանակների, կստանանք փոխադարձ արագացումների ձևափոխության հետևյալ Հայկական առնչությունները*

$$\begin{cases} B_{\lambda\sigma} = -\dfrac{B_{\sigma\lambda}}{\left(1 + s\dfrac{U_{\sigma\lambda}}{c}\right)^3} \\ B_{\sigma\lambda} = -\dfrac{B_{\lambda\sigma}}{\left(1 + s\dfrac{U_{\lambda\sigma}}{c}\right)^3} \end{cases} \text{ և } \begin{cases} B_{\mu\sigma} = -\dfrac{B_{\sigma\mu}}{\left(1 + s\dfrac{U_{\sigma\mu}}{c}\right)^3} \\ B_{\sigma\mu} = -\dfrac{B_{\mu\sigma}}{\left(1 + s\dfrac{U_{\mu\sigma}}{c}\right)^3} \end{cases} \quad \text{ԺԱ\_23}$$

Այս բաժնում ստացված արդյունքներից հետևում են որ մասնիկի անդրադարձված առանցքաթվերի ձևափոխության Հայկական հավասարումների տեսքը (կառուցվածքը) համընկնում են մասնիկի ուղիղ առանցքաթվերի ձևափոխության Հայկական հավասարումների հետ: Իսկ մասնիկի անդրադարձված արագությունների ձևափոխության Հայկական առնչությունների տեսքը (կառուցվածքը) նույնպես համընկնում են մասնիկի ուղիղ արագությունների ձևափոխության Հայկական առնչությունների հետ: Հետևաբար մենք կարող ենք սահմանել հետևյալ կարգաձևը՝ որպեսզի մենք կարողանանք մասնիկի և այլ ֆիզիկական մեծությունների ուղիղ շարժման ֆիզիկական մեծությունների համապատասխան ձևափոխության հավասարումներից ստանալ այդ նույն ֆիզիկական մեծությունների անդրադարձված շարժման ֆիզիկական մեծությունների ձևափոխության հավասարումները, ապա անհրաժեշտ է ուղիղ շարժման առանցքաթվերի և այլ ֆիզիկական մեծությունների ձևափոխության հավասարումների մեջ կատարել ստորին ցուցիչների տեղափոխություններ հետևյալ օրինաչափությամբ:

ԺԱ_24

- *Դիտարկված ֆիզիկական մեծությունների ստորին ցուցիչները փոխանակել հետևյալ կերպ*

ԺԱ_25

$$\boxed{\begin{cases} (\lambda,\sigma) \Rightarrow (\sigma,\lambda) \\ (\mu,\sigma) \Rightarrow (\sigma,\mu) \end{cases}}$$

- *Իսկ դիտարկող համակարգերը բնորոշող մեծությունների՝ հարաբերական արագությունների, հարաբերական արագացումների և ձևափոխության գործակիցների ստորին ցուցիչները փոխանակել հետևյալ կերպ*

ԺԱ_26

$$\boxed{\begin{cases} (\lambda,\mu) \Rightarrow (\mu,\lambda) \\ (\mu,\lambda) \Rightarrow (\lambda,\mu) \end{cases}}$$

Գլուխ ԺԲ

Հայկական Գամմա Գործակիցների Սահմանումը և Չնափոխության Տիեզերական Հավասարումները

Այս բաժնում ներկայացված մասնիկի անդրադարձված շարժման հետ կապ ունեցող բոլոր բանաձևերը մենք կարող ենք ստանալ նաև մասնիկի ուղիղ շարժման համապատասխան բանաձևերից, դրանց մեջ ֆիզիկական մեծությունների ստորին ցուցիչների հետ կատարելով (ԺԱ_25)-ով և (ԺԱ_26)-ով նշված տեղափոխությունները:

Երկրորդ Տեսակի Ձևափոխությունների Դեպքում Առանցքաթվերի Ձևափոխության Հայկական Գամմա Գործակիցների Սահմանումը

➤ *Դիտարկող իներցիալ համակարգերի դեպքում մասնիկի առանցքաթվերի ձևափոխության Հայկական գամմա գործակիցների սահմանումը և նշագրումները արտահայտված համապատասխան հարաբերական արագություններով*

ԺԲ_01

$$\begin{cases} \Gamma_{\lambda\mu} = \Gamma_{\text{չ}}(V_{\lambda\mu}) = \dfrac{1}{\sqrt{1 + s\dfrac{V_{\lambda\mu}}{c} + g\dfrac{V_{\lambda\mu}^2}{c^2}}} \\[2ex] \Gamma_{\mu\lambda} = \Gamma_{\text{չ}}(V_{\mu\lambda}) = \dfrac{1}{\sqrt{1 + s\dfrac{V_{\mu\lambda}}{c} + g\dfrac{V_{\mu\lambda}^2}{c^2}}} \end{cases}$$

➤ *Սահմանային դեպքում երբ դիտարկող համակարգերը համընկնում են իրար հետ, ապա Հայկական գամմա գործակիցների սեփական արժեքները կլինեն*

ԺԲ_02

$$\Gamma_{\lambda\lambda} = \Gamma_{\mu\mu} = 1$$

➤ *Գամմա2 գործակիցների (Է_23)-ով տրված արտահայտությունների մեջ տեղադրելով երկրորդ տեսակի ձևափոխության որոշիչների (Ժ_16)-ով տրված արժեքները և օգտվելով Հայկական գամմա գործակիցների վերոգրյալ սահմանումներից, կստանանք*

ԺԲ_03

$$\begin{cases} \Gamma_{\lambda\mu}^2 = \Gamma_{\lambda\mu} \\ \Gamma_{\mu\lambda}^2 = \Gamma_{\mu\lambda} \end{cases}$$

ԺԲ_04

Ազգ – Բանակ ռազմական համաժողովի մուտքի դիմաց
(22 Ապրիլի 2017թ., Երևան)

➤ *Հայկական գամմա գործակիցների ձևափոխության առնչությունները*

